



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16215

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունիսի 27-ի թիվ 101-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ ԿԳ/63-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ԶԱՂԻՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Արա Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի և Կարեն Սարգսյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,
քննության առնելով փաստաբան Սամվել Զաղինյանին (արտոնագիր թիվ 487) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող**) դատավոր Արմեն Խաչատրյանը 19.10.2016թ. կայացրել է որոշում փաստաբան Սամվել Զաղինյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու մասին և այդ նպատակով 24.10.2016թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատ: Ըստ որոշման, թիվ ԵԱԴԴ/0050/01/15 քրեական գործով 19.10.2016թ. դատական քննության ընթացքում պաշտպան Սամվել Զաղինյանն (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ:

Դիմումին կից ներկայացվել է քրեական գործով 19.10.2016թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 27.10.2016թ. թիվ 445-Ա/ԿԳ-16215 որոշմամբ փաստաբան Սամվել Զաղինյանի (արտոնագիր թիվ 487) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314¹-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 7-րդ մասի 2-րդ պարբերության համակցությամբ, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հիմքով կայացված դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը Պալատի կողմից կարգապահական վարույթ հարուցելու և՛ առիթ է, և՛ հիմք:

31.10.2016թ. կարգապահական գործը հանձնվել է Արթուր Մարտիրոսյանին՝ կարգապահական գործ նախապատրաստելու նպատակով:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Ըստ ներկայացված փաստերի, նշված քրեական գործով 19.10.2016թ. դատաքննության ընթացքում պաշտպանական միջոց կիրառված վկայի հարցաքննությունից առաջ դատավորը կողմերին տեղեկացրել է, որ իր կողմից անձամբ պարզվել է վկայի ինքնությունը, պարզաբանել է վկայի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացրել է նրան սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Վկայի հարցաքննության ընթացքում Սամվել Ջաղինյանը վկային հարցրել է, թե արդյոք նա ճանաչում է դատախազ Գարեգին Մանուկյանին և դատավոր Արմեն Խաչատրյանին, և վկան հայտարարել է, որ չի ճանաչում նրանց: Այդ բանից հետո փաստաբան Սամվել Ջաղինյանը դատարանի դահլիճում հայտարարել է, որ «*դատարանը կեղծ տեղեկություններ հայտնեց, որ ինքն անձամբ ճշտել վկայի ինքնությունը և անձը հաստատել է, որի ստորագրությամբ հավաստվել է*»: Այնուհետև նույն դատաքննության ընթացքում փաստաբանը մի քանի անգամ կրկնել է, որ դատարանը «*կեղծ տվյալներ*» է ներկայացրել դատական քննության ընթացքում: Դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմերը, գտել է, որ Սամվել Ջաղինյանն անհիմն կերպով զրպարտել է նախազահողին և դրանով ակնհայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի հանդեպ և փորձել հեղինակազրկել դատարանին:

Նախապատրաստող անձ Արթուր Մարտիրոսյանը դիմել է դատական սակցիա կիրառած դատավորին՝ խնդրելով տրամադրել առանձնացված վարույթում գտնվող պաշտպանության միջոց կիրառված վկայի իրական անուն-ազգանունով լրացված և վերջինիս ստորագրությամբ հաստատված, քրեական գործով ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշական թերթիկի պատճենը: Դատավորը 07.02.2017թ. գրությամբ մերժել է տրամադրել նախազգուշական թերթիկի պատճենը՝ վկայակոչելով դրա գաղտնիությունը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

01.12.2016թ. Արթուր Մարտիրոսյանը գրավոր հրավիրել է փաստաբան Սամվել Զաղինյանին ներկայացնել նկատառումներ կարգապահական գործի փաստերի վերաբերյալ, որին ի պատասխան փաստաբանը պատասխանել է, որ իր կարծիքը կհայտնի Խորհրդի նիստում:

Պատասխանողը Խորհրդի նիստում բանավոր հայտնել է, որ համոզված է, որ դատավորի հայտարարությունն այն մասին, որ ինքն անձամբ ստուգել է վկայի ինքնությունը, կեղծ է, որ ինքը համոզված է, որ դատավորը չի ստուգել վկայի ինքնությունը, և որ իր համոզվածությունը բխում է այն հանգամանքից, որ իր հարցին, թե արդյոք վկան ճանաչում է դատախազ Գարեգին Մանուկյանին և դատավոր Արմեն Խաչատրյանին, վկան պատասխանել է, որ չի ճանաչում, հետևաբար դատավորի հայտարարությունը կեղծ է: Նաև հայտարարելով, որ քանի որ դատավորը կատարել է կեղծ հայտարարություն, ինքը չպետք է ենթարկվի կարգապահական պատասխանատվության, քանի որ դատարանում կատարած իր հայտարարությունը համապատասխանում է իրականությանը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել ու հարցաքննվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործը նախապատրաստել է Արթուր Մարտիրոսյանը, ով 09.01.2017թ.-ին ներկայացրել է եզրակացություն: Ըստ եզրակացության, ապացուցման ենթակա են հետևյալ փաստերը՝ ապացուցման բեռի հետևյալ բաշխվածությամբ.

Ա. Դիմողը պարտավոր է ապացուցել, որ պաշտպանության միջոց կիրառված վկայի հարցաքննությունից առաջ նախազահող դատավորն անձամբ պարզել է վկայի ինքնությունը, պարզաբանել է վկային իր իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացրել է նրան սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվել համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Վերը նշված փաստի վերաբերյալ առկա է դատական նիստի արձանագրության ծայնագրությունը:

Բ. Վկայի հարցաքննության ընթացքում Սամվել Զաղինյանի հարցին վկա Ռոբերտ Յուզբաշյանը պատասխանել է, որ չի ճանաչում դատավոր Արմեն Խաչատրյանին: Նշված փաստը ապացուցված չէ և ապացուցման պատրականությունը կրում է պատասխանողը:

Վերը նշված փաստի վերաբերյալ առկա է դատական նիստի արձանագրության ծայնագրությունը:

Գ. Պատասխանող Սամվել Զաղինյանը հայտարարել է, որ դատարանը կեղծ տեղեկություններ է հայտնել դատական նիստի ընթացքում այն մասին, որ ինքը ստուգել է վկայի ինքնությունը, հաստատել է վերջինիս անձը, որը հավաստվել է ստորագրությամբ: Այդ հայտարարությունը պատասխանողը դատական նիստի ընթացքում կրկնել է մի քանի անգամ: Սույն

հայտարարության ճշմարտացիության ապացուցման բեռը կրում է պատասխանող կողմը:

Վերը նշված փաստի վերաբերյալ առկա է դատական նիստի արձանագրության ձայնագրությունը:

Կարգապահական գործը նախապատրաստող անձը եզրակացության օրինակը 09.01.2017թ. ուղարկել է դատական սանկցիա կիրառելու մասին որոշում ընդունած դատավոր Արմեն Խաչատրյանին և փաստաբան Սամվել Զաղինյանին, այնուհետև նույն օրը կարգապահական գործը հանձնել է Փաստաբանների պալատին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունիսի 27-ին, ժամը՝ 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Թիվ ԵԱԴԴ/0050/01/15 քրեական գործով 19.10.2016թ. դատաքննության ընթացքում կիրառվել է վկայի պաշտպանության միջոց:
Նշված փաստը հաստատվում է կողմերի պնդումներով, այդ թվում նաև Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանից ստացված 07.02.2017թ՝ գրությամբ, որը ներառված է կարգապահական գործում:
2. Դատական քննության ընթացքում պատասխանող փաստաբան Սամվել Զաղինյանը հրապարակավ մի քանի անգամ հայտարարել է, որ դատավոր Արմեն Խաչատրյանը կեղծ տեղեկություններ է հրապարակել նույն օրվա դատական նիստի ընթացքում:
Նշված փաստը հաստատվում է կարգապահական գործում առկա՝ դատական նիստի արձանագրության ձայնագրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից կարգապահական գործի շրջանակներում տրամադրված տեղեկանքի համաձայն, փաստաբան Սամվել Զաղինյանի նկատմամբ նախկինում հարուցվել են չորս կարգապահական վարույթներ, որոնցից երեքը կարճվել են արտոնության

կիրառման հիմքով, իսկ մեկ դեպքում ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողություն, որը որպես տույժ մարվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Զաղինյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Արտահայտվելու ազատությունը փաստաբանի մասնագիտության, փաստաբանական գործունեության անքակտելի մաս է: Անհնարին է պատկերացնել փաստաբանի կողմից արդյունավետ իրավաբանական ներկայացուցչության իրականացում դատարաններում առանց արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման:

«Սահմանադրության 42-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ արտահայտվելու ազատությունը, պաշտպանում է ոչ միայն անձանց կողմից բարյացակամորեն ընդունվող կարծիքներ ու գաղափարներ, այլ նաև այնպիսիք, որոնք կարող են ցնցել ու անհանգստություն պատճառել, և, ընդհանուր առմամբ, ընդունվել անբարյացակամորեն: Ի հավելումն, արտահայտվելու ազատության իրավունքով պաշտպանված է ոչ միայն խոսքի բովանդակությունը, այլ նաև մատուցման եղանակը և, առավելապես երկրորդի առումով են հիմնականում առաջանում խնդիրներ արտահայտվելու ազատության թույլատրելի շրջանակների առումով: Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով փաստաբանի մասնագիտության յուրահատկությունը, փաստաբանը գտնվում է արտահայտվելու ազատության առանձնահատուկ պաշտպանության տակ:

Արտահայտվելու ազատությունը, այնուամենայնիվ, չի երաշխավորում ամբողջովին անսահմանափակ արտահայտվելու ազատություն: Այս իրավունքի իրացումը ենթադրում է «պարտավորություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև փաստաբանների նկատմամբ: Այսպիսով, իր գործառույթներն իրականացնելիս փաստաբանը ունի ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իր վստահորդի և դատարանի առջև: Մասնավորապես, փաստաբանը ոչ միայն պարտավոր է

իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխիղճ ու եռանդուն կերպով՝ օրենքի և վարքագծի նորմերի համապատասխան, այլ նաև պարտավոր է ապահովել դատարանի հեղինակությունը հանրության աչքում: Ինչ վերաբերում է արտահայտվելու ազատությանը, թեև փաստաբանները նույնպես իրավունք ունեն հանրորեն արտահայտվել արդարադատության իրականացման մասին, նրանց կողմից քննադատության արտահայտումը, այդուհանդերձ, չպետք է անցնի որոշակի սահմաններ: Ավելին, փաստաբանի արտահայտվելու ազատությունը դատարանի դահլիճում անսահմանափակ չէ և որոշակի շահեր, ինչպես օրինակ դատական իշխանության հեղինակությունը, բավականաչափ կարևորություն է ներկայացնում, որ այդ հիմքով փաստաբանի արտահայտվելու ազատությունը սահմանափակվի (*Կուպրիյանուն ընդդեմ Կիպրոսի*, թիվ 73797/01, ՄԻԵԴ, § 174): «Դատարանի հեղինակություն» հասկացությունը ներառում է, մասնավորապես, մի սկզբունք, ըստ որի դատարանները հանդիսանում են, և որպես այդպիսին մեծամասամբ ընկալվում են հանրության կողմից, որպես մի ֆորում, որտեղ լուծվում են վեճեր, իսկ քրեական մեղադրանքի դեպքում՝ որոշվում է անձի մեղավորության կամ անմեղության մասին հարցը: Հետևաբար, դատարանի հեղինակությունը պաշտպանելու առումով վճռորոշ նշանակություն է ձեռք բերում դատարանի նկատմամբ վստահությունը, որով ժողովրդավարական հասարակարգում դատարանները պետք է ոգևորեն մեղադրալին, եթե խոսքը վերաբերում է քրեական դատավարությանը, ինչպես նաև լայն հասարակությանը (*Կուպրիյանու*, § 172): Հենց միջազգային իրավունքի այս սկզբունքն է պատճառը, ըստ որի, ինչպես արդեն նշվեց վերևում, փաստաբանը կրում է լրացուցիչ պարտականություն՝ ապահովելու դատարանի հեղինակությունը հասարակության աչքում:

Հաշվի առնելով վերը նշված սկզբունքները, որոնք արտահայտված են մարդու իրավունքների միջազգային նորմերում, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Ջաղինյանը դուրս է եկել դատարանի դահլիճում արտահայտվելու ազատության թույլատրելի շրջանակներից՝ հրապարակայնորեն հայտարարելով, որ դատավորը հայտնել է կեղծ տվյալներ, կեղծ տեղեկություններ, դրանով իսկ խախտելով Կանոնագրքի 4.1 կետի պահանջը: Փաստաբանը պարտավոր է հարգանքով վերաբերվել դատարանին: Նշվածից հետևում է, որ խնդրո առարկա հարցն առնչվում է ոչ թե խոսքի բովանդակությանը, այլ խոսքի արտահայտման, մատուցման եղանակին, որը, ինչպես արդեն նշվեց, նույնպես խոսքի ազատության կարգավորման առարկա է: Խորհուրդը գտնում է, որ կարծիք արտահայտելիս փաստաբանն ընտրել է արտահայտվելու մի եղանակ, որն ընդունակ է արատավորել անձի պատիվը, վիրավորել նրա արժանապատվությունը՝ անկախ այն հանգամանքից, թե հայտարարությունը կատարելիս փաստաբանը վիրավորելու դիտավորություն ունեցել է, թե՛ ոչ: Քրեական դատավարության հռետորաբանությունը թույլ է տալիս նույնիսկ կոշտ և սուր արտահայտությունները դատարանի դահլիճում ձևակերպել ու հնչեցնել այնպես, որ չնսեմացվի դատավարության մասնակիցների պատիվը, արժանապատվությունը: Մասնավորապես, փաստաբանը կարող է համարձակորեն չհամաձայնվել դատավորի գործողությունների կամ դիրքորոշման հետ, հայտնել իր անհամաձայնությունը:

Այսպիսով, փաստաբանը չարաշահել է արտահայտվելու իր ազատության

իրավունքը և արդյունքում անհարգալից վերաբերումք է դրսևորել դատարանի հանդեպ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սամվել Զաղինյանին (արտոնագիր թիվ 487) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Սամվել Զաղինյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սամվել Զաղինյանին և դիմողին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Արայիկ Ղազարյան